ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանարապետության կառավարության 2026 թվականի մարտի 26-ի ««Հաղթանակ» շուրջօրյա խնամքի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Նորք» շուրջօրյա խնամքի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը միացման ձևով վերակազմակերպելու, «Նորք» շուրջօրյա խնամքի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և Մալաթիա-Սեբաստիայի մասնաճյուղ ստեղծելու մասին» N 378-Ն որոշման 5-րդ կետում «եռամսյա» բառը փոխարինել «վեցամսյա» բառով:

2. Հայաստանի Հանարապետության կառավարության 2026 թվականի

մարտի 26-ի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Երևանի «Մանկան տուն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը միացման ձևով վերակազմակերպելու, «Երևանի «Մանկան տուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և Մարի Իզմիրլյանի մասնաճյուղ ստեղծելու մասին» N 336-Ն որոշման 5-րդ կետում «եռամսյա» բառը փոխարինել «վեցամսյա» բառով։

3. Հայաստանի Հանարապետության կառավարության 2026 թվականի մարտի 26-ի ««Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» և «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի «Զատիկ» երեխաներին աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը միացման ձևով վերակազմակերպելու, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի «Զատիկ» երեխաներին աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և Աջափնյակի և Նուբարաշենի մասնաճյուղեր ստեղծելու մասին» N 338-Ն որոշման 5-րդ կետում «եռամսյա» բառը փոխարինել «վեցամսյա» բառով։

4. Հայաստանի Հանարապետության կառավարության 2026 թվականի մարտի 26-ի ««Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Գյումրու «Երեխաների տուն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը միացման ձևով վերակազմակերպելու, «Գյումրու «Երեխաների տուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և Գյումրու մասնաճյուղ ստեղծելու մասին» N 339-Ն որոշման 5-րդ կետում «եռամսյա» բառը փոխարինել «վեցամսյա» բառով։

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։